ՀՀ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

2002 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գործարարության աջակցման խորհուրդը, (այսուհետ՝ ՀՀ ԳԱԽ) համաձայն ՀՀ կառավարության 2001թ. փետրվարի 22-ի N 131 որոշմամբ հաստատված կանոնադրության, իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով եւ ընդունված որոշումներին համապատասխան առաջարկություններ է ներկայացնում ՀՀ պետական կառավարման մարմինների քննարկմանը:

ՀՀ ԳԱԽ-ի 2002թ. կատարած աշխատանքների վերլուծությունը ցույց տվեց, որ խորհուրդը մեծամասամբ իրականացրել է կանոնադրությամբ իրեն վերապահված պարտականություններն ու խնդիրները, մասնավորապես՝ ներդրումների խթանումը եւ գործարարության օժանդակումը, ներդրումներին եւ գործարարությանն առնչվող վարչարարական խոչընդոտների վերացումը, գործարարների եւ պետական մարմինների միջեւ փոխհարաբերությունների համակարգումը, ՀՀ տնտեսական քաղաքականության մշակմանը գործարարների մասնակցության ապահովումը, ներդրումները եւ գործարար միջավայրը կարգավորող բարենպաստ օրենսդրական դաշտի ձեւավորման օժանդակումը եւ այլն:

Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է ինչպես իր կողմից ձեւավորած տնտեսության զարգացմանը խոչընդոտող պրոբլեմների բանկում եղած խնդիրների, այնպես էլ մինչեւ նիստերն ընկած ժամանակահատվածում գործարարների, ընկերությունների եւ այլ կազմակերպությունների կողմից ներկայացված դիմումների, բողոքների, հարցադրումների եւ առաջարկությունների շուրջ քննարկումներով: Պետք է նշել, որ ընթացիկ տարում խորհրդի համար կարեւորագույն խնդիր է հանդիսանալու ավելի խորացնելու գործարար համայնքին երկրի տնտեսական օրենսդրական դաշտի ձեւավորման աշխատանքներում նախօրոք ներգրավելու խնդրի կազմակերպման հարցը, որը փաստվել է եւ՝ «44-ի ակումբ»-ի նիստում, եւ՝ մի շարք առաջարկություններում: Ըստ էության, խորհուրդն իր կողմից ձեւավորած պրոբլեմների բանկում եղած հարցերի մեծ մասը քննարկել ու լուծումներ է տվել, եւ խնդիր է դրել առաջիկայում համալրել երկրի գործարարությանը խոչընդոտող պրոբլեմների բանկը՝ այդ աշխատանքներում հիմնականում ընդգրկելով գործարար համայնքի ներկայացուցիչներին:

ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի 2002 թվականի դրական աշխատանքի արդյունքն էր նաեւ այն, որ գործարարների, հատկապես փոքր եւ միջին ձեռնարկատիրության ներկայացուցիչների մոտ ցանկություն կար ընդգրկվելու խորհրդի աշխատանքներում: Արդյունքում, 2002թ. վերջին հրատարակվեց Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագիրը՝ խորհրդի կազմն ընդլայնելու վերաբերյալ, որով խորհրդի գործարարների կազմը համալրվեց փոքր եւ միջին ձեռնարկատիրության ներկայացուցիչներով՝ 28-ից դառնալով 44 :

2002թ. ընթացքում խորհուրդը հրավիրել է թվով 5 նիստ, որտեղ քննարկվել են բազմաբնույթ հարցեր:

ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի 2002թ. առաջին նիստը գումարվել է հունվարի 26-ին, հետեւյալ օրակարգով՝

1. *Առեւտրի համաշխարհային կազմակերպությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության գործընթացի մասին:*

2. *ՀՀ արդյունաբերողների եւ գործարարների միության կողմից ներկայացված առաջարկներ.*
   ա) «Աշխատանքային խումբ ստեղծելու մասին» ՀՀ ԳԱԽ-ի որոշման նախագիծ,

բ) «Գործարարությանը պետական պարգևներով պարգևատրելու համար համապատասխան մեդալ սահմանելու մասին» ԳԱԽ-ի որոշման նախագիծ,

գ) 2002 թվականը Մանթաշյանցի տարի հայտարարելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:

3. ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի աշխատանքների տարեկան հաշվետվության հաստատում:

Նիստի քննարկման արդյունքում հանձնարարվել է.

- ✓ ՀՀ արդյունաբերության եւ առեւտրի նախարար Կ.Ճշմարիտյանին, Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության նախագահ Ա. Ղազարյանին, քարտուղարության գործադիր տնօրեն Վ.Մովսիսյանին՝ 15-օրյա ժամկետում «28-ի ակումբ»-ում կազմակերպել լայն քննարկումներ Առեւտրի Համաշխարհային կազմակերպությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության հետ կապված գործընթացի վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում հրավիրել նաև այլ շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչների:

- ✓ Գործարարության աջակցման խորհրդի աշխատանքների թափանցիկությունն ապահովելու նպատակով՝
  ա/ «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Վ.Մովսիսյանին՝ գործակալության ինտերնետային էջում լուսաբանել Գործարարության աջակցման խորհրդի տարեկան հաշվետվությունը, ինչպես նաև պարբերաբար տեղեկություններ զետեղել խորհրդի աշխատանքների, ընդունված որոշումների, գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումների մասին: Ինտերնետային էջի առկայության մասին տեղեկացնել զանգվածային լրատվության միջոցներով՝ նպատակ ունենալով ապահովել գործարար միջավայրին, մասնավորապես՝ փոքր եւ միջին ձեռնարկատերերին հուզող հարցերի ներկայացումը խորհրդին:
  բ/ ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության պետ Մ.Հարությունյանին՝ ՀՀ կառավարության ինտերնետային էջում ԳԱԽ-ի աշխատանքների մասով հոդում կատարել ԶՀԳ-ի ինտերնետային էջին:

- ✓ ՀՀ արդյունաբերության եւ առեւտրի նախարար Կ.Ճշմարիտյանին, Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության նախագահ Ա.Ղազարյանին՝ հաջորդ նիստին ներկայացնել հիմնավորված առաջարկ՝ գործարար միջավայրի ակնառու ներկայացուցիչներին պետական պարգևներով պարգևատրելու համար համապատասխան չափորոշիչներ ընտրելու վերաբերյալ:

- ✓ ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Վ.Խաչատրյանին և ՀՀ արդյունաբերության եւ առեւտրի նախարար Կ.Ճշմարիտյանին՝ 15-օրյա ժամկետում քննարկել «Աշխատանքի վարձատրության մասին» ՀՀ օրենքի կիրարկումից ծագող խնդիրները, մասնավորապես՝ նպատակ ունենալով կարգավորել արտասահմանյան պատվերներով եւ ներկրվող հումքով աշխատող ընկերություններում հարկադիր պարապուրդի ընթացքում աշխատանքի վարձատրության հետ կապված հարցերը:

- ✓ Խորհրդի հաջորդ նիստը գումարել ս/թ փետրվարի վերջին, ԶՀԳ-ում: Նիստի օրակարգը ձեւավորել «28-ի ակումբում»՝ օրակարգում ընդգրկելով նաեւ «Պրոբլեմների բանկում» առկա առաջնահերթ լուծում պահանջող հարցերը:

Տրված հանձնարարականների կատարման արդյունքում՝

- Հաստատվել է ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի տարեկան հաշվետվությունը:

- Որոշվել է փետրվարի 25-ին 28-ի ակումբում նիստ գումարել, ինչը տեղի է ունեցել, որտեղ քննարկվել է Առեւտրի համաշխարհային կազմակերպությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության հարցը: Քննարկումներին մասնակցել են նաեւ այլ շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչներ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել ակումբում պարբերաբար հանդիպումներ կազմակերպելու մասին՝ ԱՀԿ անդամակցության շուրջ հետագա զարգացումներին գործարարներին իրազեկելու նպատակով:

ՀՀ ԳԱԽ-ի 2-րդ նիստը գումարվել է 01.03.02թ.-ին՝ հետեւյալ օրակարգով՝

1. *«Երեւանի ոսկերչական գործարան» ԲԲԸ-ի առաջարկն արտադրության ընթացքում առաջացած տեխնոլոգիական փաստացի բնական եւ այլ կորուստների չափը հաստատելու մասին:*

2. *«Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ի եւ ՀՀ պետական եկամուտների նախարարության միջեւ ծագած խնդրի քննարկում:*

3. *«Արմավիա» ավիաընկերության առաջարկը՝ օդային ելքի համար սահմանված պետական տուրքի գանձման իրավասությունը ավիատոմսերի վաճառք իրականացնող ընկերություններին վերապահելու մասին:*

4. *«Արմիտալ» ՍՊԸ-ի /Grandi Molini Italiani/ բարձացրած հարցը մաքսային վարչարարության վերաբերյալ:*

5. *«Կոկա-Կոլա Բոթլերս Արմենիա» ՓԲԸ-ի եւ ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի միջեւ ծագած վեճի շուրջ քննարկում:*

Նիստի ընթացքում հանձնարարվել է.

- ✓ Քարտուղարությանը՝ ընդունել ի գիտություն, որ յուրաքանչյուր հերթական նիստի օրակարգը խորհրդի անդամներին է ուղարկվում նիստից 5 օր առաջ՝ նախապես օրակարգում ընդգրկված հարցերը շահագրգիռ մարմինների հետ քննարկելուց եւ համապատասխան կարծիքները ստանալուց հետո:

- ✓ Խորհրդի անդամներին՝ նիստերի արձանագրություններով սահմանված հանձնարարականների կատարումն իրականացնել դրանց համար նախատեսված ժամկետներում:

- ✓ ՀՀ արդյունաբերության եւ առեւտրի նախարար Կ.Ճշմարիտյանին՝ ««Աշխատանքի վարձատրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը 15-օրյա ժամկետում քննարկել խորհրդի անդամների հետ՝ հաջորդ նիստին ներկայացնելով նախագծի վերջնական տարբերակը:

- ✓ «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Վ.Մովսիսյանին՝

ա/ 2-օրյա ժամկետում շրջանառության մեջ դնել «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ-ի, «Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ի, «Արմիտալ» ՍՊԸ-ի եւ «Արմավիա» ավիաընկերության կողմից բարձրացված հարցերը:
բ/ 10-օրյա ժամկետում գործարարներին իրազեկել շահագրգիռ մարմինների կարծիքների մասին, անհրաժեշտության դեպքում հարցերի ամփոփ տարբերակը ներկայացնել խորհրդի քննարկմանը:

- ✓ ՀՀ արդյունաբերության եւ առեւտրի նախարար Կ.Ճշմարիտյանին, «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Վ.Մովսիսյանին՝ համատեղ քննարկել «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով՝ օտարերկրյա ներդրողի համար սահմանված ՀՀ օրենսդրության 5 տարվա կայունության երաշխիքի հարցը եւ հաջորդ նիստին ներկայացնել հիմնավորված տեղեկանք:

ՀՀ ԳԱԽ-ի նիստի քննարկման արդյունքում հաշվի առնելով, որ «Աշխատանքի վարձատրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը, «Երեւանի ոսկերչական գործարան» ԲԲԸ-ի, «Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ի, «Արմիտալ» ՍՊԸ-ի, «Արմավիա» ավիաընկերության, «Կոկա-Կոլա Բոթլերս Արմենիա» ՓԲԸ-ի կողմից բարձրացված եւ «Օտարերկրյա ներդրումների մասին»ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով՝ օտարերկրյա ներդրողի համար սահմանված ՀՀ օրենսդրության 5 տարվա կայունության երաշխիքի հարցերը նախապես չէին քննարկվել նախարարություններում եւ գերատեսչություններում, ինչպես նաեւ հաշվի առնելով բարձրացված հարցերի բարդությունը՝ որոշվեց քննարկել համապատասխան նախարարություններում եւ գերատեսչություններում, այնուհետեւ առաջարկությունները եւ եզրակացությունները ներկայացնել ՀՀ ԳԱԽ-ի քարտուղարությանը՝ հաջորդ նիստի օրակարգում ներառելու նպատակով:
Բացի դրանից որոշվեց, որ յուրաքանչյուր հերթական նիստի օրակարգը խորհրդի անդամներին պետք է ուղարկվի նիստից 5 օր առաջ՝ նախապես օրակարգում ընգրկված հարցերը շահագրգիռ մարմինների հետ քննարկելուց եւ համապատասխան կարծիքները ստանալուց հետո:
Խորհրդի անդամները պետք է նիստերի արձանագրություններով սահմանված հանձնարարականների կատարումն իրականացնեն դրանց համար նախատեսված ժամկետներում:

ՀՀ ԳԱԽ-ի աշխատանքներն առավել ռացիոնալ եւ համակարգված կազմակերպելու համար Հայաստանի Հանրապետության վարչապետի 2002 թվականի մարտի 5-ի թիվ 112 որոշման համաձայն «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի կառուցվածքում ստեղծվել է «ՀՀ Գործարարության աջակցման հարցերի քարտուղարություն», որը նախապատրաստում է խորհրդի նիստերին ու օրակարգին վերաբերվող համապատասխան նյութերը եւ կազմակերպում նյութերի տրամադրումը խորհրդի անդամներին, հետեւում է խորհրդի որոշումների կատարմանը, խորհրդին ներկայացնում է առաջարկներ՝ Հայաստանի Հանրապետությունում ներդրումների խթանման եւ վարչարարական խոչընդոտների վերացման հարցերի վերաբերյալ, ապահովում է խորհրդի գործունեության ու արդյունքների վերաբերյալ հրապարակային տեղեկատվությունը, տեղեկատվություն է տրամադրում պետական նշանակության ծրագրային միջոցառումների, կատարվող եւ կատարվելիք աշխատանքների վերաբերյալ, արձանագրում է խորհրդի նիստերի քննարկումները եւ դրանց հիման վրա կազմում որոշման համապատասխան նախագծեր, գրանցում է խորհրդի անդամների ներկայացրած գրավոր հատուկ կարծիքները, խորհրդի որոշումները եւ նիստերի արձանագրություններն ուղարկում է համապատասխան նախարարություններ եւ գերատեսչություններ:

Քարտուղարության խնդրանքով ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունն աջակցել է՝ տրամադրելով կահույք եւ համակարգչային տեխնիկա:

Նախորդ նիստի բարդ լուծումներ պահանջող, ինչպես նաեւ ՀՀ գործարարության աջակցման խորհրդի 3-րդ նիստի օրակարգային հարցերի շուրջ ս/թ ապրիլի 26-ին ՀՀ վարչապետի մոտ հրավիրվել է նախնական խորհրդակցություն՝ ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի, ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման, ՀՀ պետական եկամուտների, ՀՀ արդարադատության նախարարությունների եւ ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտի, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության մասնակցությամբ:

ՀՀ գործարարության աջակցման խորհրդի 3-րդ հերթական նիստը գումարվել է 2002թ. մայիսի 14-ին՝ հետեւյալ օրակարգով՝

1. *«Աշխատանքի վարձատրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի քննարկում:*

2. *«Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով՝ օտարերկրյա ներդրողի համար սահմանված ՀՀ օրենսդրության 5 տարվա կայունության երաշխիքների կիրառման վարչարարական եւ օրենսդրական հարցերի քննարկում՝ մասնավորապես «Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ի դիմումը (ՀՀ Վարչապետի 2002թ. մարտի 11-ի N107-1071 հանձնարարականը):*

3. *01.03.2002թ. ՀՀ ԳԱԽ-ի նիստի N2 արձանագրության 4-րդ կետի համաձայն ՀՀ Վարչապետի 2002թ. մարտի 11-ի ներքոհիշյալ հանձնարարականների կատարման ընթացքի մասին.*
   ա) N 099-1093 - «Արմավիա» ընկերության դիմումի կապակցությամբ
   բ) N 044-1072 - «Կոկա-Կոլա» բոթլերս Արմենիա ընկերության դիմումի կապակցությամբ
   գ) N 099-1094 - «Երեւանի ոսկերչական գործարան» ընկերության դիմումի կապակցությամբ

4. *ՀՀ Վարչապետի 2002թ. մարտի 11-ի N 107-1071 հանձնարարականի համաձայն «Արմիտալ» ՍՊԸ-ի դիմումի քննարկման մասին:*

5. *Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 31-ի N 692 որոշմամբ հաստատված՝ «Ավելացված արժեքի հարկի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով այլ հարկային պարտավորությունների հաշվին հաշվանցման կամ վերադարձման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարների մեծությունը որոշելու եւ դրանք հիմնավորող տեղեկանքը տալու կարգում» «Արմենիան Քափրը Փրոգրամ» («Մանես և Վալլեքս» ՓԲԸ) գլխավոր տնօրեն եւ ԳԱԽ-ի անդամ՝ Վ.Մեջլումյանի կողմից փոփոխություններ եւ լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկությունների քննարկում :*

Նիստի ընթացքում ՀՀ վարչապետի կողմից եւ խորհրդի անդամների համաձայնությամբ տրվել են հետեւյալ հանձնարարականները.

✓ ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարար Կ.Ճշմարիտյանին՝
   ա/ «Աշխատանքի վարձատրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ խորհրդի անդամներից ստացված կարծիքները 5-օրյա ժամկետում ամփոփելուց հետո՝ նախագիծը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ կառավարության քննարկմանը:

բ/ «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի նոր նախագիծը 10-օրյա ժամկետում քննարկել շահագրգիռ մարմինների՝ ՀՀ արդարադատության, ՀՀ պետական եկամուտների, ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունների, ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի հետ՝ հնարավորինս բացառելով օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունների տարընթերցումները:

- ✓ Խորհրդի քարտուղարությանը /այսուհետ՝ քարտուղարություն/՝ 28-ի ակումբում Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության մասնակցությամբ կազմակերպել քննարկումներ «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի նախագծի շուրջ: Նախագծի վերջնական տարբերակի վերաբերյալ 20-օրյա ժամկետում շահագրգիռ մարմինների մասնակցությամբ ՀՀ վարչապետի մոտ կազմակերպել քննարկում:

- ✓ Հավանություն չտալ «Արմավիա» ավիաընկերության առաջարկությանը, հաշվի առնելով քննարկման արդյունքում շահագրգիռ մարմինների եզրակացությունները, ինչպես նաեւ հարցի լուծման առկա պայմաններում վարչարարական մեխանիզմների բացակայությունը՝ ոչ պատշաճ համարելով ընկերության ներկայացուցչի բացակայությունը խորհրդի նիստին:

- ✓ ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի նախագահ Ա.Ավետիսյանին՝ 7-օրյա ժամկետում մեկ անգամ եւս շահագրգիռ մարմինների՝ ՀՀ արդարադատության, ՀՀ պետական եկամուտների, ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի, ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարությունների ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկել «Կոկա-Կոլա Բոթլերս Արմենիա» ՓԲԸ-ի, «Արմենիա» ՓԲԸ-ի եւ ՀՀ մաքսային կոմիտեի միջեւ վեճը՝ հարցը արտադատական կարգով լուծելու նպատակով: Բանակցությունների արդյունքների մասին տեղեկատվություն տրամադրել ՀՀ կառավարության աշխատակազմին եւ քարտուղարությանը՝ ՀՀ վարչապետի մոտ խորհրդակցություն կազմակերպելու նպատակով:

- ✓ ՀՀ պետական եկամուտների նախարար Ե.Զախարյանին՝ ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի, ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման, ՀՀ արդարադատության նախարարությունների հետ համատեղ 7-օրյա ժամկետում բանակցել «Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ի հետ ծագած խնդիրների շուրջ: Բանակցությունների արդյունքների մասին տեղեկատվություն տրամադրել ՀՀ կառավարության աշխատակազմին եւ քարտուղարությանը՝ ՀՀ վարչապետի մոտ խորհրդակցություն կազմակերպելու նպատակով:

- ✓ Հիմք ընդունելով «Երեւանի ոսկերչական գործարան» ԲԲԸ-ի բարձրացրած հարցը, եւ նպատակ ունենալով հնարավորություն ընձեռնել կազմակերպություններին օգտվելու «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 21 հոդվածով նախատեսված դրույթներից.
  ա/ ՀՀ նախարարություններին եւ գերատեսչություններին՝ արագացնել ՀՀ կառավարության 29.04.99թ. «Հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող գույքի փաստացի կորստի /բնական կորստի/ չափերը սահմանելու կարգի մասին» N 272 որոշման կատարումը.
  բ/ ՀՀ պետական եկամուտների նախարար Ե.Զախարյանին եւ ՀՀ արդարադատության նախարար Դ.Հարությունյանին՝ եռամսյա ժամկետում ՀՀ վարչապետին ներկայացնել տեղեկատվություն՝ վերը նշված որոշման կատարման ընթացքի վերաբերյալ:

Մինչեւ հաջորդ նիստն ընկած ժամանակահատվածում՝ տրված հանձնարարականների կատարման արդյունքում.

- «Աշխատանքի վարձատրության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարության կողմից ներկայացվել է ՀՀ կառավարություն, որն էլ քննարկվել է ՀՀ կառավարության 30.05.02թ. հերթական նիստում՝ արժանացել է հավանության եւ ուղարկվել Ազգային ժողով:

- Մշակվել է «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարության կողմից, այնուհետեւ ներկայացվել է ՀՀ գործարարության աջակցման խորհրդի քարտուղարությանը, որից հետո նախագիծն ուղարկվել է խորհրդի բոլոր անդամներին, ինչպես նաեւ համապատասխան նախարարություններին եւ գերատեսչություններին:
  Խորհրդի 28 անդամների եւ շահագրգիռ նախարարությունների ու գերատեսչությունների մասնակցությամբ ս/թ հունիսի 28-ին կազմակերպվել է լայն քննարկում «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի նիստերի դահլիճում, որի ընթացքում խորհրդի անդամների եւ պետական կառավարման մարմինների ներկայացուցիչների կողմից արվեցին մի շարք առաջարկներ եւ դիտողություններ, որոնք արձանագրվել են եւ գրավոր տեսքով տրամադրվել ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարությանը՝ օրենքի նախագիծը լրամշակելու եւ առաջիկայում ՀՀ վարչապետի մոտ եւ ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի նիստում այն քննարկելու նպատակով:

- Հավանության չի արժանացել «Արմավիա» ավիաընկերության առաջարկությունը՝ հաշվի առնելով քննարկման արդյունքում շահագրգիռ մարմինների եզրակացությունները, ինչպես նաեւ հարցի լուծման առկա պայմաններում վարչարարական մեխանիզմների բացակայությունը: 14.05.02թ. Գործարարության աջակցման խորհրդի նիստի N3 արձանագրությունը քարտուղարության կողմից պաշտոնապես ուղարկվել է Արմավիա ընկերությանն՝ ի գիտություն:

- ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի, ՀՀ արդարադատության, ՀՀ պետական եկամուտների, ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի, ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարությունների ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկվել է «Կոկա-Կոլա Բոթլերս Արմենիա» ՓԲԸ-ի եւ ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի միջեւ ծագած վեճը: Երկկողմ համաձայնությամբ կնքվել է հաշտության պայմանագիր, որը հաստատվել է շահագրգիռ բոլոր կազմակերպությունների կողմից եւ վավերացվել է ՀՀ տնտեսական դատարանում:

- «Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ի հետ ծագած խնդիրների շուրջ ՀՀ պետական եկամուտների նախարարությունում տեղի է ունեցել բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ բանակցություններ, որի արդյունքում հաշտության եզրեր չեն գտնվել եւ հարցը լուծում չի ստացել: Բանակցությունների վերաբերյալ կազմվել է պաշտոնական արձանագրություն-տեղեկանք, որն էլ ՀՀ պետական եկամուտների նախարարության կողմից ուղարկվել է բոլոր շահագրգիռ կողմերին:

- Խորհրդի որոշման համաձայն ՀՀ վարչապետի հանձնարարականը ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից օպերատիվ կերպով ուղարկվել է խնդրին իրավասու բոլոր նախարարությունների և գերատեսչությունների կատարմանը: Վերոհիշյալ խնդրի վերաբերյալ ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարությունը դիմել է Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական արխիվային ֆոնդին 1965-1991թթ. հաստատված բնական կորստի նորմաների ձեռք բերման խնդրանքով, եւ այժմ աշխատանքներ են տարվում վերոհիշյալ նախարարության կողմից

կենտրոնացված կարգով հնարավոր բոլոր նյութերի բնական կորուստների մշակման եւ հաստատման ուղղությամբ՝ նախարարությունը միաժամանակ խնդրել է վերոհիշյալ հանձնարարականի ժամկետը երկարացնել 4 ամսով:

- Պաշտոնապես իրավասու բոլոր նախարարություններին եւ գերատեսչություններին ծանուցվել է, որ ՀՀ կառավարության 29.04.99թ. «Հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող գույքի փաստացի կորստի /բնական կորստի/ չափերը սահմանելու կարգի մասին» N 272 որոշմամբ չի կարգավորվում արտադրության ընթացքում նյութերի օգտագործումից առաջացող տեխնոլոգիական ծախսերի /կորուստների/ նորմաների սահմանման գործընթացը:

- ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության կողմից սահմանված ժամկետում ստացվել է առաջարկություն, ըստ որի արտադրության ընթացքում նյութերի օգտագործումից առաջացող ծախսերի /կորուստների/ նորմաների սահմանման /հաստատման/ գործընթացի կարգավորման վերաբերյալ նախարարության կողմից մշակվել է ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծ, որը գտնվում է շրջանառության ու քննարկման փուլում եւ սահմանված կարգով շուտով կներկայացվի ՀՀ կառավարության քննարկմանը:

- Խորհրդի կազմի մեջ մտնող «Արարատի ոսկու արդյունահանման ձեռնարկություն» ՍՊԸ-ից, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ից, «Էյջ-Փի-Էլ Արմենիա» ՍՊԸ-ից եւ «Էյ-Փի-Ջի Լաբս» ՍՊԸ-ից ստացվել են բազմաթիվ առաջարկություններ, որոնք ՀՀ վարչապետի 21.06.2002թ. N 107-3096 հանձնարարականով ուղարկվել են շահագրգիռ նախարարությունների եւ գերատեսչությունների քննարկմանը: Համապատասխան եզրակացությունները ստանալուց հետո կկազմակերպվի քննարկում վերոհիշյալ առաջարկությունների շուրջ՝ խորհրդի առաջիկա նիստերից մեկում:

- ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարության կողմից մշակվել է ՀՀ կառավարության հուլիսի 31-ի N 692 որոշմամբ հաստատված կարգում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը, ինչպես նաեւ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի կողմից առաջարկվել է լիովին նոր կարգ, որոնց վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների նախարարությունն արտահայտել է իր բացասական դիրքորոշումը: Խնդրի փոխհամաձայնեցված լուծումներ գտնելու նպատակով ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարությունում ս/թ հունիսի 18-ին կազմակերպվել է խորհրդակցություն բոլոր կողմերի մասնակցությամբ, որի արդյունքում չի հաջողվել մշակել եւ ներկայացնել հարցի լուծման միասնական տարբերակ: Վերոհիշյալ նախարարության կողմից առաջարկվում է հարցի լուծման հայեցակարգային նոր տարբերակ, որն էլ ներկայացվել է խորհրդի հաջորդ նիստում:

- ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարությունը ՀՀ վարչապետի 29.05.2002թ. N 107-2562 հանձնարարականի համաձայն ՀՀ պետական գույքի կառավարման նախարարության աջակցությամբ մշակել է ՀՀ կառավարության եւ օտարերկրյա ներդրողների միջեւ կնքված պայմանագրերի, դրանցով նախատեսված երկկողմ պարտավորությունների և պայմանների վերաբերյալ տեղեկանքը: Տվյալ հարցի վերաբերյալ լրացուցիչ ստացվել է նաեւ «Էյ-Փի-Ջի Լաբս» ՍՊԸ-ի կողմից տեղեկատվությունը՝ երկկողմ պարտավորությունների վերաբերյալ, որը կցված է վերոհիշյալ տեղեկանքին: Տեղեկանքը դրվել է խորհրդի հաջորդ նիստի քննարկմանը:

ՀՀ ԳԱԽ-ի 4-րդ նիստը գումարվել է 2002թ. հուլիսի 2-ին՝ հետեւյալ օրակարգով՝

1. *14.05.2002թ. ՀՀ ԳԱԽ-ի նիստի N3 արձանագրությամբ տրված հանձնարարականների կատարման ընթացքի մասին:*

   ա) «Կոկա-Կոլա Բոթլերս Արմենիա» ՓԲԸ-ի եւ ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի միջեւ բանակցությունների արդյունքների մասին:

   բ) «Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ի եւ ՀՀ պետական եկամուտների նախարարության միջեւ ծագած խնդիրների շուրջ բանակցությունների ընթացքի վերաբերյալ:

   գ) ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 31-ի N 692 որոշմամբ հաստատված «Ավելացված արժեքի հարկի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով այլ հարկային պարտավորությունների հաշվին հաշվանցման կամ վերադարձման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարների մեծությունը որոշելու եւ դրանք հիմնավորող տեղեկանքը տալու կարգում» փոփոխություններ կատարելու վերաբերյալ ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարության եւ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի ներկայացրած առաջարկների քննարկում:

   դ) ՀՀ կառավարության եւ օտարերկրյա ներդրողների միջեւ կնքված պայմանագրերի, դրանցով նախատեսված երկկողմ պարտավորությունների եւ պայմանների, դրանց կատարման ընթացքի մասին ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարության կողմից ներկայացված տեղեկանքի վերլուծության քննարկում:

2. *ՀՀ ԳԱԽ-ի անդամների հերթական ռոտացիային հավանություն տալու մասին:*

Խորհրդի 4-րդ նիստի օրակարգում ընդգրկված հարցերը քննարկվել են համապատասխան իրավասու նախարարություններում եւ գերատեսչություններում: Օրակարգի նյութերը եւ քննարկման փաստաթղթերը քարտուղարության կողմից նախապատրաստվել եւ ուղարկվել են համապատասխան նախարարություններ, գերատեսչություններ եւ խորհրդի բոլոր անդամներին:

Նիստի քննարկման արդյունքում խորհրդի անդամների համաձայնությամբ ՀՀ վարչապետի կողմից տրվել են հանձնարարականներ.

✓ ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարար Կ.Ճշմարիտյանին՝
ա/ շարունակել աշխատանքները «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի նախագծի լրամշակման ուղղությամբ՝ հաշվի առնելով «28-ի ակումբում» քննարկման արդյունքները, ինչպես նաեւ նախարարությունների եւ գերատեսչությունների կարծիքներն ու դիտողությունները եւ մինչեւ ս/թ սեպտեմբերին կայանալիք ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի նիստը օրենքի լրամշակված նախագծի քննարկման համար ՀՀ վարչապետի մոտ կազմակերպել խորհրդակցություն:
բ/ հաշվի առնելով ՀՀ պետական եկամուտների նախարարության պատրաստակամությունը մեկ անգամ եւս քննարկելու «Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ի հետ ծագած խնդիրները, վեճի կոնկրետ համատեքստում լուծում գտնելու առումով՝ մեկ շաբաթյա ժամկետում կազմակերպել բանակցություններ ՀՀ պետական եկամուտների նախարարության եւ «Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ի ներկայացուցչների մասնակցությամբ: Հարցին լուծում չտալու դեպքում վեճը լուծել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Արդյունքների մասին

տեղեկատվություն տրամադրել ՀՀ կառավարության աշխատակազմին եւ ՀՀ ԳԱԽ-ի քարտուղարությանը:

- ✓ Ընդունելի համարելով ՀՀ պետական եկամուտների նախարարության եւ ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարության առաջարկությունները ավելացված արժեքի հարկի գերավճարների վերադարձման կամ այլ հարկային պարտավորությունների հաշվին հաշվանցման գործընթացը ՀՀ օրենքով կարգավորելու անհրաժեշտության մասին՝
  ա/ ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարար Կ.Ճշմարիտյանին, ՀՀ պետական եկամուտների նախարար Ե.Զախարյանին, ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Վ.Խաչատրյանին՝ խնդրին շահագրգիռ կազմակերպությունների մասնակցությամբ մշակել վերոհիշյալ գործընթացի կարգավորման ՀՀ օրենքի նախագիծը կամ այլ օրենքներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենքների նախագծերը, եւ մինչ ՀՀ ԳԱԽ-ի առաջիկա նիստը նրա քարտուղարությանը եւ ՀՀ կառավարության աշխատակազմին ներկայացնել տեղեկատվություն՝ ձեռք բերված փոխհամաձայնությունների վերաբերյալ ՀՀ վարչապետի մոտ խորհրդակցություն կազմակերպելու նպատակով:
  բ/ ՀՀ պետական եկամուտների նախարար Ե.Զախարյանին՝ մեկ շաբաթյա ժամկետում մինչ հարցին օրենսդրական լուծում տալը՝ քննարկել ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 31-ի N 692 որոշմամբ հաստատված «Ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով այլ հարկային պարտավորությունների հաշվին հաշվանցման կամ վերադարձման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարների մեծությունը որոշելու եւ դրանք հիմնավորող տեղեկանքը տալու կարգով» սահմանված գործընթացի մասնակի պարզեցմանն ու հստակեցմանն ուղղված ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարար Կ.Ճշմարիտյանի առաջարկությունը՝ արդյունքների մասին սահմանված կարգով առաջարկություն ներկայացնելով ՀՀ կառավարությանը եւ տեղեկատվություն՝ ՀՀ ԳԱԽ-ի քարտուղարությանը:

- ✓ ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարար Կ.Ճշմարիտյանին՝
  ա/ ՀՀ պետական գույքի կառավարման նախարար Դ.Վարդանյանի հետ համատեղ շարունակել աշխատանքները ՀՀ կառավարության եւ օտարերկրյա ներդրողների միջեւ կնքված պայմանագրերի, դրանցով նախատեսված երկկողմ պարտավորությունների եւ պայմանների, դրանց կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկանքի ամփոփման ուղղությամբ, առանձնահատուկ ուշադրություն դարձնելով ՀՀ կառավարության կողմից ստանձնած պարտավորությունների փաստացի կատարման վերլուծության վրա, տեղեկանքը նախօրոք տրամադրել ՀՀ ԳԱԽ-ի քարտուղարությանը՝ սեպտեմբերին կայանալիք ՀՀ ԳԱԽ-ի նիստում քննարկելու համար:
  բ/ շահագրգիռ մարմինների մասնակցությամբ մինչեւ վերոհիշյալ հարցի վերջնական քննարկումը, հնարավորության սահմաններում լուծել փոխադարձ պարտավորությունների կատարման ընթացքում առաջացող վեճերը, մասնավորապես մեկ շաբաթյա ժամկետում Երեւանի քաղաքապետարանի եւ «Էյ Փի Զի Լաբս» ՍՊԸ-ի հետ համատեղ քննարկել երկկողմ պարտավորությունների կատարման ընթացքի վերաբերյալ ընկերության առաջարկությունները, արդյունքների մասին տեղեկատվությունը ներկայացնել ՀՀ վարչապետին եւ ՀՀ ԳԱԽ-ի քարտուղարությանը:

- ✓ Հավանություն տալ ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի անդամների հերթական ռոտացիայի մասին ՀՀ վարչապետի որոշման նախագծին:

- ✓ ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի քարտուղարությանը՝ ՀՀ ԳԱԽ-ի հերթական նիստը հրավիրել ս/թ սեպտեմբեր ամսին:

Վերոհիշյալ հանձնարարականների կատարման ընթացքում.

- Նիստին հաջորդող ժամանակաշրջանի ընթացքում «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի նախագիծի վերաբերյալ առաջարկություններ եւ դիտողություններ են ստացվել շահագրգիռ նախարարություններից եւ կազմակերպություններից, բազմաթիվ գործարարներից, ինչպես նաեւ «28-ի ակումբում» քննարկման ժամանակ խորհրդի անդամներից, եւ դրանց հիման վրա կատարվել է նախագծի լրամշակումը:
  Հաշվի առնելով օրենքի նախագծի շուրջ լայնամասշտաբ քննարկումները, դրանցում բոլոր շահագրգիռ կողմերի ընդգրկվածության աստիճանը, եւ այն, որ մեծամասամբ հարթվել են հիմնական տարաձայնությունները, ՀՀ վարչապետի մոտ խորհրդակցություն չի հրավիրվել եւ նպատակահարմար է համարվել օրենքի նախագիծը դնել խորհրդի առաջիկա նիստի քննարկմանը: Օրենքի նախագծին կից ներկայացված է ՀՀ արդարադատության եւ շահագրգիռ այլ նախարարությունների առաջարկություններն ու դիտողությունները եւ դրանց ընդունման վերաբերյալ տեղեկանքը, ինչպես նաեւ ներկայացված դիրքորոշումների վերաբերյալ ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարության պարզաբանումների մասին տեղեկանքը:

- «Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ի հետ ծագած վեճի արտադատարանական լուծման նպատակով մի քանի անգամ ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարություն են հրավիրվել ընկերության սեփականատիրոջ ներկայացուցիչները, որոնց հետ բանակցությունների ընթացքում նախարարությունը ներկայացրել է հաշտության հնարավոր ելքերի վերաբերյալ իր մոտեցումները: Առաջարկված տարբերակները ներկայումս քննարկվում են սեփականատերերի կողմից, որոնց վերաբերյալ դիրքորոշումը կներկայացվի խնդրին իրավասու համապատասխան նախարարություններին:

- ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարությունը, ըստ էության, դեռեւս ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի 02.07.2002թ. N 4 նիստում ներկայացրել էր հարցի լուծման հայեցակարգային նոր տարբերակ, այն է.
  ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով այլ հարկային պարտավորությունների հաշվին հաշվանցման կամ վերադարձման ենթակա գումարները հաշվանցել կամ վճարել՝ հիմք ընդունելով կազմակերպությունների կողմից ներկայացված դիմումը եւ կատարված հաշվարկը: Ներկայացված հաշվարկի հավաստիության ստուգման նախաձեռնությունը վերապահվում է ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությանը: Վերջինիս դիմումի հիման վրա, ՀՀ պետական եկամուտների նախարարությունը 30-օրյա ժամկետում նախարարությանը տրամադրում է տեղեկանք կազմակերպության կողմից ներկայացված հաշվարկի հավաստիության կամ դրանում տեղ գտած անճշտությունների վերաբերյալ՝ հակառակ դեպքում ներկայացված հաշվարկը հիմք է ընդունվում հաշվանցման կամ կանխավճարի ետ վերադարձման համար:
  Հաշվի առնելով խնդրի բարդությունը եւ նրա էական ազդեցությունը ՀՀ պետական բյուջեի կատարման ցուցանիշների վրա՝ ՀՀ կառավարության 01.08.2002թ. N 1235 որոշմամբ իրականացվեց գործընթացի մասնակի պարզեցում եւ հստակեցում, ինչը մեր կարծիքով, որոշ չափով, կմեղմացնի առկա լարվածությունը: Նախարարության առաջարկությունը դեռեւս գտնվում է քննարկման փուլում՝ ՀՀ կառավարության աշխատակազմում եւ շահագրգիռ նախարարություններում:

- ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարության կողմից ներկայացված ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 31-ի N 692 որոշմամբ հաստատված «Ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով այլ հարկային պարտավորությունների հաշվին հաշվանցման կամ վերադարձման ենթակա

ավելացված արժեքի հարկի գումարների մեծությունը որոշելու եւ դրանք հիմնավորող տեղեկանքը տալու կարգում» փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկը ընդունվել է ՀՀ կառավարության 01.08.2002թ. N 1235 որոշմամբ:

- ՀՀ կառավարության եւ օտարերկրյա ներդրողների միջեւ կնքված պայմանագրերով ամրագրված պարտավորությունների եւ դրանց կատարման վերաբերյալ տեղեկանքը նախապատրաստվել է ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման, ինչպես նաեւ ՀՀ պետական գույքի կառավարման նախարարության համատեղ ուժերով եւ ներկայացված է ինչպես ՀՀ կառավարության աշխատակազմին, այնպես էլ քարտուղարությանը եւ ընդգրկված է հաջորդ նիստի օրակարգում:

- ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարության կողմից ուսումնասիրվել է ՀՀ կառավարության և «Էյ Փի Ջի Լաբս» ՍՊԸ-ի միջև 2000թ. սեպտեմբերի 5-ին և 20-ին կնքված պայմանագրերով ստանձնած երկկողմ պարտավորությունների կատարման ընթացքը, ուսումնասիրության եւ ընկերության ներկայացուցիչների հետ բանակցությունների արդյունքում առաջարկվել է կնքել նոր պայմանագիր, ինչն արժանացել է ՀՀ վարչապետի (06.08.2002թ. N 033-3669) հավանությանը: Ներկայումս ընկերության իրավաբանների կողմից նախապատրաստվում է նոր պայմանգիր, որը ներկայացվելուց հետո կքննարկվի եւ կտրվի ստորագրման՝ հաշվի առնելով շահագրգիռ գերատեսչություններից ստացված կարծիքները:

- ՀՀ վարչապետի 2002թ. հուլիսի 12-ի N 432-Ա որոշմամբ իրականացվել է ՀՀ ԳԱԽ-ի անդամների հերթական 4-րդ ռոտացիան:

- Դեռեւս 14.05.2002թ. նիստում, նպատակ ունենալով հնարավորություն ընձեռնել կազմակերպություններին օգտվելու «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 21 հոդվածով նախատեսված դրույթներից՝ ՀՀ նախարարություններին եւ գերատեսչություններին հանձնարարվել էր արագացնել ՀՀ կառավարության 29.04.1999թ. «Հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող գույքի փաստացի կորստի /բնական կորստի/ չափերը սահմանելու կարգի մասին» N 272 որոշման կատարումը, ինչպես նաեւ ՀՀ պետական եկամուտների նախարար Ե. Զախարյանին եւ ՀՀ արդարադատության նախարար Դ. Հարությունյանին **եռամսյա ժամկետում** ՀՀ վարչապետին ներկայացնել տեղեկատվություն վերը նշված որոշման կատարման ընթացքի վերաբերյալ:
Վերոհիշյալ խնդրի վերաբերյալ 29.08.2002թ. N 3472/2-2 գրությամբ ստացվել է ՀՀ պետական եկամուտների նախարարության տեղեկատվությունը ՀՀ կառավարության 29.04.99թ. «Հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող գույքի փաստացի կորստի /բնական կորստի/ չափերը սահմանելու կարգի մասին» N 272 որոշման կատարման ընթացքի վերաբերյալ, ըստ որի առայժմ միայն ՀՀ գյուղատնտեսության եւ ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարություններն են ակտիվորեն աշխատում այդ ուղղությամբ,մասնավորապես.
  - ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից 07.07.2002թ. թիվ 07-ԴՁ-08-1531 գրությամբ ներկայացվել են «Հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող մսի եւ մսամթերքի պահպանման ժամանակ առաջացող փաստացի կորստի (բնական կորստի) նորմաները հաստատելու մասին» եւ «Հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող հացահատիկի, հացամթերքների, խոտաբույսերի եւ սերմերի, հատիկախարի (ֆուրաժի) եւ այլ կերատեսակների տեղափոխման եւ պահպանման ժամանակ առաջացող փաստացի կորստի (բնական կորստի) նորմաները հաստատելու մասին» գերատեսչական նորմատիվ ակտերի նախագծերը, որոնք ներկայումս՝ ՀՀ պետական եկամուտների նախարարության համաձայնությունը ստանալուց հետո, գտնվում են գրանցման փուլում,

- ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից 01.08.2002թ. թիվ 07-ԴՁ-08-1539 գրությամբ ներկայացվել է «ՀՀ գյուղատնտեսության նախարարության 2002թ. հունվարի 31-ի N 29 հրամանով հաստատված «Հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող կոնյակի սպիրտների եւ կոնյակների գծով փաստացի կորստի (բնական կորստի) նորմաներ»-ում փոփոխություններ կատարելու մասին» գերատեսչական նորմատիվ ակտի նախագիծ, որը ներկայումս գտնվում է քննարկման փուլում,
- ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարության կողմից 09.08.2002թ. թիվ 01-08/1173 գրությամբ ներկայացվել են քիմիական արտադրանքի, էլեկտրասարքավորումների, կենցաղային, սննդի, թեթեւ եւ տեքստիլ արդյունաբերության ու լեռնահանքային ապրանքների բնական կորստի նորմաներ, որոնք ներկայումս գտնվում են քննարկման փուլում:

Բացի այդ, ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարությունը դիմել է Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական արխիվային ֆոնդին 1965-1991թթ. հաստատված բնական կորստի նորմաների ձեռքբերման խնդրանքով, որի կապակցությամբ նախարարությունը խնդրել է վերոհիշյալ հանձնարարականի կատարման ժամկետը երկարեցնել 4 ամսով եւ ստացել է ՀՀ վարչապետի թիվ 033-2592 համաձայնությունը:

- Հաշվի առնելով արտադրական ձեռնարկությունների առաջարկությունները, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 21 հոդվածի ու ՀՀ կառավարության 29.04.1999թ. N 272 որոշման տարընթերցումները վերացնելու նպատակով ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությանը խորհրդի 14.05.2002թ. N 4 նիստում հանձնարարվել էր ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման, ՀՀ պետական եկամուտների, ՀՀ արդարադատության նախարարությունների հետ համատեղ երկշաբաթյա ժամկետում ՀՀ կառավարության աշխատակազմին եւ քարտուղարությանը ներկայացնել առաջարկություն արտադրության ընթացքում նյութերի օգտագործումից առաջացող ծախսերի /կորուստների/ նորմաների սահմանման /հաստատման/ գործընթացը իրավական ակտով կարգավորելու հնարավորության եւ նպատակահարմարության վերաբերյալ:
  Տվյալ խնդրի մասին ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունը 31.05.2002թ. N 6/2-1-2275-5/75 գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմին է ներկայացրել իր դիրքորոշումը եւ հարցի լուծման հնարավոր մոտեցումները, ինչը ստացել է ՀՀ վարչապետի 11.06.2002թ. N 034-2905 համաձայնությունը, որից հետո ՀՀ կառավարության 29.04.99թ. «Հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող գույքի փաստացի կորստի /բնական կորստի/ չափերը սահմանելու կարգի մասին» N 272 որոշման մեջ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության կողմից ներկայացվել է շահագրգիռ նախարարությունների քննարկմանը:
  Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շահագրգիռ կողմերի կողմից ներկայացված առաջարկությունները ենթադրում էին որոշման նախագծի լրամշակում, հետագայում նշված որոշման նախագիծը լրամշակվեց եւ կրկին անգամ ներկայացվեց շահագրգիռ նախարարությունների կարծիքին:

ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի թվով 5-րդ նիստը հրավիրվել է 2002թ. հոկտեմբերի 16-ին, հետեւյալ օրակարգով՝

1. *02.07.2002թ. ՀՀ ԳԱԽ-ի նիստի N 4 արձանագրությամբ և 14.05.2002թ. նիստի N 3 արձանագրության 6-րդ կետի ա), բ), և դ) ենթակետերով տրված հանձնարարականների կատարման ընթացքի մասին,*

2. *«Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի լրամշակված նախագծի քննարկում,*

3. *ՀՀ կառավարության եւ օտարերկրյա ներդրողների միջեւ կնքված պայմանագրերի, դրանցով նախատեսված երկկողմ պարտավորությունների եւ պայմանների, դրանց կատարման ընթացքի մասին ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման եւ ՀՀ պետական գույքի կառավարման նախարարությունների կողմից ներկայացված վերլուծության քննարկում,*

4. *Հայաստանի Հանրապետության Նախագահի «ՀՀ Գործարարության աջակցման խորհուրդ ստեղծելու մասին» ՆՀ-768 հրամանագրում փոփոխություն կատարելու մասին ՀՀ Նախագահի հրամանագրի նախագծի մասին,*

5. *Հաշվետվություն ՀՀ ԳԱԽ-ի 2002թ. 9-ը ամիսների կատարված աշխատանքների մասին:*

Նիստի քննարկման արդյունքում, ՀՀ ԳԱԽ-ի անդամների համաձայնությամբ, վարչապետի կողմից հանձնարարականներ են տրվել.

Բավարար համարելով ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի (ՀՀ ԳԱԽ) 02.07.2002թ. նիստի N 4 արձանագրությամբ եւ 14.05.2002թ. նիստի N 3 արձանագրության 6-րդ կետի ա), բ) եւ դ) ենթակետերով տրված հանձնարարականների կատարման ընթացքը՝

ա) Զարգացման հայկական գործակալության տնօրեն Վ.Մովսիսյանին՝ իրականացնել մոնիտորինգ՝ ՀՀ արտադրական, մասնավորապես արտահանման ուղղվածություն ունեցող ձեռնարկություններում, նպատակ ունենալով գնահատել ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 31-ի N 692 որոշմամբ հաստատված «Ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով այլ հարկային պարտավորությունների հաշվին հաշվանցման կամ վերադարձման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարների մեծությունը որոշելու եւ դրանք հիմնավորող տեղեկանքը տալու կարգով» սահմանված գործընթացի մասնակի պարզեցմանն ուղղված ՀՀ կառավարության 2002թ. օգոստոսի 1-ի «ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 31-ի N 692 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1235-Ն որոշման դրական ազդեցությունը ավելացված արժեքի հարկի գերավճարների վերադարձման գործընթացի վրա: ՀՀ ԳԱԽ-ի հաջորդ նիստին ներկայացնել տեղեկատվություն արդյունքների մասին:

բ) Արձանագրելով ավելացված արժեքի հարկի վերադարձման գործընթացի էլ ավելի հստակեցման անհրաժեշտությունը՝ ՀՀ պետական եկամուտների նախարար Ե. Զախարյանին, ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Վ.Խաչատրյանին՝ շահագրգիռ նախարարությունների եւ գերատեսչությունների հետ համատեղ մինչև ս/թ նոյեմբերի վերջը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը, նպատակ ունենալով վերացնել վերոհիշյալ օրենքի եւ այդ ոլորտին վերաբերող ՀՀ կառավարության որոշումների միջեւ տեղ գտած հակասությունները: Մինչեւ ՀՀ ԳԱԽ-ի հաջորդ նիստը ՀՀ ԳԱԽ-ի քարտուղարությանը ներկայացնել տեղեկատվություն օրենքի մշակման ընթացքի վերաբերյալ:

գ) ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարար Կ.Ճշմարիտյանին եւ Երեւանի քաղաքապետ Ռ.Նազարյանին՝
մեկ շաբաթյա ժամկետում ավարտել «Էյ Փի Ջի Լաբս» ՍՊԸ-ի նկատմամբ երկկողմ պայմանագրերով ՀՀ կառավարության կողմից ստանձնած պարտավորությունների կատարման շուրջ բանակցությունները եւ պրոբլեմների լուծման մասին մանրամասն տեղեկատվություն ներկայացնել ՀՀ Վարչապետին եւ ՀՀ ԳԱԽ-ի քարտուղարությանը:

դ) Արձանագրելով, որ զգալի աշխատանք է կատարվել ՀՀ կառավարության 29.04.1999թ. «Հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող գույքի փաստացի կորստի /բնական կորստի/ չափերը սահմանելու կարգի մասին» N 272 որոշման կատարումն արագացնելու վերաբերյալ նախորդ նիստի հանձնարարականների ուղղությամբ՝

ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Վ.Խաչատրյանին, ՀՀ պետական եկամուտների նախարար Ե. Զախարյանին՝
շահագրգիռ նախարարությունների եւ գերատեսչությունների հետ համատեղ

- մինչեւ ս/թ նոյեմբերի վերջը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել արտադրության ընթացքում նյութերի օգտագործումից առաջացող տեխնոլոգիական կորուստների (ծախսերի) նորմաների սահմանման գործընթացի ու ձեռնարկությունների եւ ՀՀ հարկային մարմինների միջեւ տվյալ ոլորտում փոխհարաբերությունների կարգավորման մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ (նպատակահարմարության դեպքում ՀՀ կառավարության 29.04.1999թ. N 272 որոշման մեջ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու ձեւով): Կատարման ընթացքի մասին մինչեւ ՀՀ ԳԱԽ-ի հաջորդ նիստը տեղեկատվություն ներկայացնել ՀՀ ԳԱԽ-ի քարտուղարությանը:

- Նպատակ ունենալով վերացնել ՀՀ կառավարության 29.04.2002թ. N 272 որոշման եւ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի գործողությամբ պայմանավորված արտադրության ընթացքում առաջացող բնական եւ տեխնոլոգիական կորուստների (ծախսերի) նորմաների սահմանման եւ դրանց կիրառման գործընթացում տեղ գտած հակասությունները՝ մինչև ս/թ նոյեմբերի վերջը նախապատրաստել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ ՀՀ օրենքի նախագիծ, հաշվի առնելով նաեւ ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի առաջարկությունները: Օրենքի նախագիծը մինչեւ ՀՀ ԳԱԽ-ի հաջորդ նիստը տրամադրել ՀՀ ԳԱԽ-ի քարտուղարությանը՝ «28-ի ակումբում» բոլոր կողմերի մասնակցությամբ լայն քննարկումներ կազմակերպելու նպատակով: ՀՀ ԳԱԽ-ի քարտուղարությանը՝ արդյունքների մասին տեղեկատվություն ներկայացնել ՀՀ ԳԱԽ-ի հաջորդ նիստում:

ե) ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարար Կ.Ճշմարիտյանին, Զարգացման հայկական գործակալության տնօրեն Վ.Մովսիսյանին՝
եռօրյա ժամկետում ավարտել «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ նոր օրենքի լրամշակված նախագծի վերաբերյալ բոլոր առաջարկությունների ամփոփումը և ս/թ հոկտեմբերի 21-ին ՀՀ վարչապետի մոտ կազմակերպել քննարկում վերոհիշյալ օրենքի նախագծի շուրջ՝ ՀՀ կառավարության հաջորդ նիստի օրակարգում այն ներառելու համար:

զ) Արձանագրել, որ այս պահի դրությամբ ՀՀ կառավարության եւ օտարերկրյա ներդրողների միջեւ երկկողմ պայմանագրերով ՀՀ կառավարության ստանձնած պարտավորությունների թերակատարումը հասցվել է նվազագույնի եւ, որ

հիմնականում խնդիրներ ծագում են ներդրողների կողմից պետության հանդեպ պարտավորությունների կատարման հարցում: Կարեւորելով խնդիրը՝ ՀՀ պետական գույքի կառավարման նախարար Դ.Վարդանյանին՝
մեկ շաբաթյա ժամկետում ՀՀ կառավարության աշխատակազմին եւ ՀՀ ԳԱԽ-ի քարտուղարությանը ներկայացնել Հայաստանում մասնավորեցման ամբողջ ընթացքում օտարերկրյա ներդրողների կողմից փոխադարձ պարտավորությունների կատարման վերաբերյալ նախապատրաստվող տեղեկանքը՝ պատկերն ամբողջացնելու եւ անհրաժեշտության դեպքում համապատասխան քայլեր ձեռնարկելու համար:

է) Հավանություն տալ ՀՀ Նախագահի «ՀՀ Գործարարության աջակցման խորհուրդ ստեղծելու մասին» ՆՀ-768 հրամանագրում փոփոխություն կատարելու մասին առաջարկությանը եւ ՀՀ Նախագահի հրամանագրի նախագիծը ներկայացնել ՀՀ Նախագահի աշխատակազմ՝ սահմանված կարգով ընթացք տալու համար:

ը) Հավանություն տալ ՀՀ ԳԱԽ-ի 2002թ. 9-ը ամիսներին կատարված աշխատանքների հաշվետվությանը: ՀՀ կառավարության լրատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության պետ Մ.Հարությունյանին, ՀՀ ԳԱԽ-ի քարտուղարությանը՝ հաշվետվության մասին հաղորդագրությունը հրապարակել մամուլում:

Նիստից հետո ընկած ժամանակահատվածում աշխատանքներ են տարվել նիստի արձանագրությամբ տրված հանձնարարականների կատարման, ժամկետների պահպանման եւ վերահսկողության ուղղությամբ: Այսպես՝

- ✓ Ըստ արձանագրության 1-ին կետի բ) ենթակետի՝ նպատակ ունենալով գնահատել ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 31-ի N 692 որոշմամբ հաստատված «Ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով այլ հարկային պարտավորությունների հաշվին հաշվանցման կամ վերադարձման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարների մեծությունը որոշելու եւ դրանք հիմնավորող տեղեկանքը տալու կարգով» սահմանված գործընթացի մասնակի պարզեցմանն ուղղված ՀՀ կառավարության 2002թ. օգոստոսի 1-ի «ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 31-ի N 692 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1235-Ն որոշման դրական ազդեցությունը ավելացված արժեքի հարկի գերավճարների վերադարձման գործընթացի վրա ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի քարտուղարության կողմից համապատասխան գրություններ են ուղարկվել հանրապետության շուրջ 24 խոշորագույն արտահանող ընկերություններին: Նրանց մի մասից ստացվել են գրություններ, մի մասի հետ էլ բանավոր հարցումներ են անցկացվել, որով փաստվում է վերոհիշյալ որոշման դրական ազդեցությունը գերավճարների վերադարձման գործընթացի վրա: Միաժամանակ մի շարք ընկերություններ նշում են, որ անցած ժամանակահատվածը դեռեւս բավարար չէ լիարժեք մոնիտորինգ իրականացնելու համար եւ առաջարկվում է տարվա արդյունքներն ամփոփելուց եւ համապատասխան լիարժեք տեղեկատվություն ստանալուց հետո արդյունքները նորից ներկայացնել ՀՀ ԳԱԽ-ի առաջիկա նիստերից մեկում:

- ✓ Արձանագրության 1-ին կետի գ) ենթակետի կատարման արդյունքում 2002թ. դեկտեմբեր ամսին ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության կողմից մշակվել, ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացել եւ ՀՀ Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ ընդունվել է «2003թվականի ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի հետ մեկտեղ ի թիվս այլ

օրենքների՝ ««Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով վերացվել է ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 31-ի «Ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով այլ հարկային պարտավորությունների հաշվին հաշվանցման կամ վերադարձման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարների մեծությունը որոշելու եւ դրանք հիմնավորող տեղեկանքը տալու կարգը» N 692 որոշման եւ վերոհիշյալ օրենքի միջեւ եղած հակասությունները: Ամբողջովին նոր խմբագրությամբ շարադրվել է վերոհիշյալ օրենքի 25-րդ հոդվածը:

- ✓ Արձանագրության 1-ին կետի դ) ենթակետի կատարման արդյունքում ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարության եւ «Էյ Փի Ջի Լաբս» ՍՊԸ-ի միջեւ բանակցությունների գործընթացն ավարտվել է: Ընկերության հետ եղած հողային վեճի հետ կապված խնդրին վերջնական լուծում տալու նպատակով Երեւանի քաղաքապետարանը համապատասխան գրությամբ դիմել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին համապատասխան տեղեկություններ ստանալու համար: Այժմ աշխատանքները վերջնական փուլում են:

- ✓ Արձանագրության 1-ին կետի ե) ենթակետի կատարման արդյունքում ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության կողմից ս/թ հոկտեմբերի վերջին ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել ՀՀ կառավարության 29.04.1999թ. «Հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող գույքի փաստացի կորստի /բնական կորստի/ չափերը սահմանելու կարգի մասին» N 272 որոշման մեջ փոփոխություն կատարելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Հաշվի առնելով որոշման շուրջ առկա տարաձայնությունները, ՀՀ ԳԱԽ-ի քարտուղարության նախաձեռնությամբ 04.12.02թ. ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչությունում այդ հարցի վերաբերյալ տեղի ունեցավ խորհրդակցություն, որտեղ ներկա էին բոլոր շահագրգիռ նախարարությունների ներկայացուցիչները, ՀՀ կառավարության աշխատակազմի արտադրական ենթակառուցվածքների վարչության, տնտեսագիտական վարչության եւ ՀՀ ԳԱԽ-ի քարտուղարության պետերը: Արդյունքում որոշվեց այդ տեսքով որոշումը չընդունել, որովհետեւ տվյալ խնդիրը որոշման ընդունմամբ, ըստ էության, վերջնական լուծում չի ստանում եւ առաջարկվեց մեկ շաբաթյա ժամկետում ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել «Ծահութահարկի մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխությունների նախագիծը, որով կվերանա հակասությունը «Ծահութահարկի մասին» ՀՀ օրենքում, որից հետո նոր միայն հնարավոր կլինի անդրադառնալ ՀՀ կառավարության 29.04.1999թ. «Հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող գույքի փաստացի կորստի /բնական կորստի/ չափերը սահմանելու կարգի մասին» N 272 որոշման մեջ համապատասխան փոփոխություններ իրականացնելուն: Հաշվի առնելով ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչությունում կայացած խորհրդակցության արդյունքները՝ ՀՀ վարչապետի 10.12.2002թ. N 034-6171 հանձնարարականով (կցվում է) թիվ 9 արձանագրությունն ուղարկվել է ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության եւ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության քննարկմանը: Ժամանակի սղության պատճառով հնարավոր չեղավ վերոհիշյալ օրենքի նախագիծը մշակել եւ քննարկել ՀՀ կառավարությունում մինչև 2002թ. վերջը: Ըստ վերջին տեղեկատվության «Ծահութահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխությունները կդրվեն ՀՀ կառավարության առաջիկա նիստերից մեկի քննարկմանը եւ կներկայացվի ՀՀ Ազգային ժողովի այս տարվա առաջին նիստում:

- ✓ Ըստ արձանագրության 2-րդ կետի՝ «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի շուրջ 2002թ. հոկտեմբերի 22-ին ՀՀ վարչապետի մոտ կազմակերպվեց

խորհրդակցություն, որտեղ որոշվեց, որ «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի նախագիծն այդ բովանդակությամբ աննպատակահարմար է շրջանառության մեջ դնել, ինչպես նաեւ ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարին հանձնարարվեց՝ հստակեցնել օրենքի նախագծում օգտագործվող տերմինների մեկնաբանությունները՝ դրանք համաձայնեցնելով ՀՀ արդարադատության նախարարության եւ ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության հետ, Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում ներառել ՀՀ օրենսդրությունում առկա բոլոր դրույթները, որոնք այս կամ այն կերպով առնչվում են ներդրումների իրականացման գործընթացի հետ, սահմանում են ներդրումների համար բարենպաստ ռեժիմներ եւ ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել առանձին ամբողջական տեղեկանք ՀՀ օրենսդրությունում բարենպաստ ռեժիմներ սահմանող դրույթների վերաբերյալ: «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի նախագծի լրամշակման գործընթացը ներկայումս ընթացքի մեջ է:

- ✓ Արձանագրության 3-րդ կետի կատարման արդյունքում ՀՀ պետական գույքի կառավարման նախարարության կողմից Հայաստանում մասնավորեցման ամբողջ ընթացքում օտարերկրյա ներդրողների կողմից փոխադարձ պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկանքը վերջնական լրամշակված տեսքով ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմին եւ քարտուղարությանը: ՀՀ վարչապետի 26.11.2002թ. N 029-5849 հանձնարարականով ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից վերոհիշյալ տեղեկանքն ուղարկվել է ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման, ՀՀ էներգետիկայի, ՀՀ տրանսպորտի եւ կապի, ՀՀ գյուղատնտեսության եւ ՀՀ առողջապահության նախարարություններին եւ Երեւանի քաղաքապետարանին՝ համապատասխան ուսումնասիրություններ կատարելու եւ անհրաժեշտության դեպքում առաջարկություններ ներկայացնելու նպատակով: Ըստ նախարարությունների եւ գերատեսչությունների պայմանագրերով ստանձնած պարտավորությունների մեծ մասը կատարման ընթացքի մեջ են կամ կատարված են եւ լրացուցիչ գործողությունների վերաբերյալ նախարարություններն առաջարկություններ չունեն, բացառությամբ «ԱրմենՏել» ՀՁ-ի հետ կապված:

- ✓ Արձանագրության 4-րդ կետի կատարման արդյունքում ՀՀ ԳԱԽ-ի քարտուղարության կողմից ՀՀ նախագահի «ՀՀ Գործարարության աջակցման խորհուրդ ստեղծելու մասին» ՆՀ-768 հրամանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ ՀՀ նախագահի հրամանագրի վերջնական նախագիծը ներկայացվել է ՀՀ վարչապետի ստորագրմանը, որից հետո ուղարկվել է ՀՀ նախագահի աշխատակազմ: «ՀՀ նախագահի 2000թ. դեկտեմբերի 31-ի «ՀՀ Գործարարության աջակցման խորհուրդ ստեղծելու մասին» ՆՀ-768 հրամանագրում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ նախագահի 2002թ. հոկտեմբերի 30-ի ՆՀ-1196-Ա հրամանագիրը ստորագրվել է ՀՀ նախագահի կողմից, որով խորհրդի գործարար համայնքի անդամների թիվը 28-ից ավելացել եւ դարձել է 44:

- ✓ Արձանագրության 5-րդ կետի կատարման արդյունքում քարտուղարության կողմից մշակվել է ՀՀ ԳԱԽ-ի 2002թ. 9-ը ամիսների կատարված աշխատանքների հաշվետվության սեղմ տարբերակը, որը 2002թ. հոկտեմբերի 17-ին տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 185-րդ համարում լրագրական մեկ էջի սահմաններում:
  Միաժամանակ նիստի ընթացքում ՀՀ վարչապետի կողմից տրված հանձնարարականի համաձայն ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի քարտուղարության կողմից 2002թ. նոյեմբերի 28-ին «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի նիստերի դահլիճում կազմակերպվել է ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի գործարար համայնքը ներկայացնող

անդամների ընդլայնված կազմի՝ «44-ի ակումբի» անդրանիկ նիստ, որի արդյունքում առաջարկվել է ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի առաջիկա նիստերի օրակարգերում ընդգրկել հետեւյալ խնդիրները.

- ՀՀ ԳԱԽ-ի գործարար համայնքը ներկայացնող անդամների շրջանակից արտահանման աջակցման եւ խրախուսման, հարկային եւ մաքսային վարչարարության կարգավորման, օրենսդրական նախաձեռնությունների եւ նորմատիվ փաստաթղթերի մշակման հարցերի մշտական գործող երեք աշխատանքային խմբերի ստեղծման մասին:

- Գործարար միջավայրի եւ պետական կառավարման մարմինների միջեւ փոխհամաձայնությունը խորացնելու նպատակով՝ պետական կառավարման մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության տնտեսական, մասնավորապես հարկային եւ մաքսային օրենսդրության հարցերի վերաբերյալ մշակվող կարևորագույն փաստաթղթերը, մինչ դրանք ՀՀ կառավարության քննարկման ներկայացնելը, նախօրոք ՀՀ ԳԱԽ-ի նիստում քննարկելու եւ կարծիքներ ձեւավորելու մասին:

- ՀՀ գործարարությանը խոչընդոտող պրոբլեմների նոր բանկի ձևավորման մասին :

- Առեւտրի Համաշխարհային Կազմակերպությանն անդամակցության հետ կապված Հայաստանի Հանրապետության ներսում գործողությունների եւ միջոցառումների ծրագրի մշակման և իրականացման մասին:

Քարտուղարության կողմից նախապատրաստական աշխատանքներ են տարվում ՀՀ Գործարարության աջակցման խորհրդի հերթական նիստի հրավիրման համար, որը նախատեսվում է հրավիրել 2003թ. հունվարի վերջին, ուր կքննարկվեն բազմաթիվ խնդիրներ:

Խորհրդի կողմից ուղղորդված աշխատանք է կատարվում վարչարարական խոչընդոտների բացահայտման ուղղությամբ, որոնց մի մասն արդեն իսկ ամփոփված է ըստ խորհրդի անդամների եւ գործարարների առաջարկությունների ու կընդգրկվեն խորհրդի առաջիկա նիստերից մեկի օրակարգում:

ՀՀ ԳԱԽ-ն իր աշխատանքներն իրականացնում է հրապարակայնության եւ իրազեկության պայմաններում, ընդունված որոշումները մշտապես լուսաբանվում են մամուլում եւ հեռուստատեսությամբ:

ՀՀ ԳԱԽ-ի քարտուղարություն